ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-21/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Արթիկ 20.07.2021թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ.Վարագյան, Մ.Փանոյան, Գ.Մկրտչյան, Ա.Տոնոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Կարախանյան

1. Գնանշման հարցման գնման ընթացակարգի անհամապատասխանությունների շտկման մասին:

(զեկուցող՝ Ա.Գրիգորյան)

1.1. Ընդունել ի գիտություն, որ <<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են շտկման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերի գնահատման մասին:

(զեկուցող՝ Ա.Գրիգորյան)

1. <<Տոնոյան Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար, փաստաթղթերի բացակայության պատճառով:
2. <<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար, քանի որ <<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից տրված լիցենզիայի ներդիր՝ տրանսպորտային ոլորտի շինարարության իրականացման համար:

Քննարկելով վերը նշված հանգամանքները, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ՝

N	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Ճանշին>> ՓԲԸ	բավարար
2	<< Տ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՓԲԸ	բավարար
3	<<ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ	անավարար
4	<<Տոնոյան Գրուպ>> ՍՊԸ	անբավարար

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին >> N 526 – Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշեց կասեցնել նիստը և բավարար գնահատված մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Բանակցությունները տեղի կունենան 23.07.2021թ.-ին, ժամը 14.30-ին, ք. Արթիկ, Ազատության հրպ.1 հասցեում գտնվող Արթիկի համայնքապետարանի շենքի առաջին հարկի դահլիճում:

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Ա.Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Գ.Վարագյան
	_____	Մ.Փանոյան
	_____	Ա.Տոնոյան
	_____	Գ.Մկտրչյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Հ.Կարախանյան